## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Արմեն Եսոյան, շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն, 2024 թվականի մարտի 18-ից 22-ը:
3. **Հրավիրող կողմը.**
   Հյուսիսային Մակեդոնիայի Կառավարություն և Կանաչ կլիմայի հիմնադրամ (ԿԿՀ):
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ԿԿՀ-ի՝ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ տարածաշրջանային երկխոսությանը: Միջոցառումը հնարավորություն ընձեռեց խորացնելու գիտելիքները Կանաչ կլիմայի հիմնադրամի առաջնահերթությունների, քաղաքականությունների, գործիքների և ուղեցույցների վերաբերյալ, ինչը կբարելավի «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի («ԲԾԻԳ» ՊՀ)՝ ԿԿՀ-ի թարմացված պահանջներին համապատասխանող ծրագրեր մշակելու կարողությունները՝ որպես ուղիղ հասանելիություն ունեցող ազգային իրականացնող մարմին:

Տարածաշրջանային երկխոսությունը միավորել էր Ազգային լիազոր մարմիններին, հավատարմագրված կազմակերպություններին, իրականացման գործընկերներին և ԿԿՀ-ի այլ գործընկերների՝ նպատակ ունենալով հարթակ տրամադրել շահագրգիռ կողմերին՝ խթանելու իրենց ներգրավվածությունը ԿԿՀ-ի հետ:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցան մի շարք թեմատիկ տեխնիկական և ծրագրային քննարկումներ և սեմինարներ, որոնց նպատակն էր աջակցել մասնավոր և պետական հատվածներին ԿԿՀ-ի թարմացված ռազմավարական պլանի շրջանակներում համագործակցության համատեքստում:

Տեղեկացնում եմ նաև, որ տարածաշրջանային երկխոսության շրջանակներում մասնակցել եմ մի շարք երկկողմ հանդիպումների, այդ թվում՝ ԿԿՀ-ի երկրի ծրագրավորման տնօրենի տեղակալ Նոնիլանիլա Զենդալայի գլխավորած ԿԿՀ-ի քարտուղարության պատվիրակության հետ հանդիպմանը, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կառավարիչ Մակսիմ Սուրկովի և տարածաշրջանային պատասխանատուների հետ հանդիպմանը, մակեդոնական կառավարության հետ հանդիպմանը:

**Քննարկված թեմաները (հարցերը).**

- շրջակա միջավայրի նախարարության ծրագրային գաղափարները. «ԲԾԻԳ» ՊՀ-ի կողմից հիմնադրամին ներկայացված ծրագրային հայեցակարգերը և դրանց առաջընթացը, հիմնադրամի փոփոխված մոտեցումներն ու քաղաքականությունները Երկրի ծրագրի մշակման և պատրաստվածության

աջակցության ծրագրերի իրականացման համատեքստում, Արմսվիսսբանկի հավատարմագրման խնդիրները,

- համագործակցության ընդլայնման հնարավորությունները,
- «ԲԾԻԳ» ՊՀ-ի հավատարմագրման ֆինանսական հասանելիությունը միկրո չափից (մինչև 10 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրերի իրականացում) փոքր չափի (համաֆինանսավորմամբ 10-ից 50 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրերի իրականացում) բարձրացնելու հնարավորությունը և ընթացակարգը:
- հիմնադրամի նոր ծրագրային ճևաչափի՝ 1 ծրագրի իրականացման համար հավատարմագրման (Project-specific assessment approach) շրջանակներում ներկայացվելիք ծրագրի գաղափարը, այն լրամշակելու և բարելավելու ուղղությունները և հնարավորությունները:

**5. Հանդիպումները, ելույթները**

Տարածաշրջանային երկխոսության շրջանակներում մասնակցել եմ մի շարք երկկողմ հանդիպումների, այդ թվում՝ ԿԿՀ-ի երկրի ծրագրավորման տնօրենի տեղակալ Նոնիլանիլա Ջենդալայի գլխավորած ԿԿՀ-ի քարտուղարության պատվիրակության հետ հանդիպմանը, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կառավարիչ Մակսիմ Սուրկովի և տարածաշրջանային պատասխանատուների հետ հանդիպմանը, մակեդոնական կառավարության հետ հանդիպմանը:

ԿԿՀ-ի քարտուղարության պատվիրակության հետ հանդիպման ընթացքում քննարկվել են շրջակա միջավայրի նախարարության ծրագրային գաղափարները. «ԲԾԻԳ» ՊՀ-ի կողմից հիմնադրամին ներկայացված ծրագրային հայեցակարգերը և դրանց առաջընթացը, հիմնադրամի փոփոխված մոտեցումներն ու քաղաքականությունները Երկրի ծրագրի մշակման և պատրաստվածության աջակցության ծրագրերի իրականացման համատեքստում, Արմսվիսսբանկի հավատարմագրման խնդիրները:

Համագործակցության ընդլայնման վերաբերյալ քննարկումներ եմ ունեցել Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Ավստրիական զարգացման կազմակերպության ներկայացուցիչների հետ: Քննարկումների արդյունքում հետագա համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություններ են ձեռք բերվել Սերբիայի և Մոլդովայի պատվիրակների հետ:

Հավելեմ նաև, որ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կառավարիչ Մակսիմ Սուրկովի խորհրդով առանձին հանդիպում եմ ունեցել նաև ԿԿՀ քարտուղարության հավատարմագրման հարցերով մասնագետի հետ՝ «ԲԾԻԳ» ՊՀ-ի հավատարմագրման ֆինանսական հասանելիությունը միկրո չափից (մինչև 10 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրերի իրականացում) փոքր չափի (համաֆինանսավորմամբ 10-ից 50 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրերի իրականացում) բարձրացնելու վերաբերյալ:

Մասնակցել եմ նաև Ակբա բանկի ներկայացուցչի և ԿԿՀ քարտուղարության՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության պատասխանատուների միջև տեղի ունեցած հանդիպմանը, որի ընթացքում կողմերը քննարկեցին հիմնադրամի նոր ծրագրային ճևաչափի՝ 1 ծրագրի իրականացման համար հավատարմագրման (Project-specific assessment approach) շրջանակներում ներկայացվելիք ծրագրի գաղափարը,

խորհրդակցեցին այն լրամշակելու և բարելավելու ուղղությունների և հնարավորությունների շուրջ:

6. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում որոշում է կայացվել շարունակել սերտ համագործակցությունը ԿԿՀ քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ՝ մասնավորապես ակտիվորեն համագործակցելով Երկրի ծրագրի մշակման աշխատանքների շրջանակներում:

7. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել միջոցառման ավարտից հետո գործնական տիրույթում նյութականացնել ձեռք բերված պայմանավորվածություններն առավել ակտիվ համագործակցության վերաբերյալ:

Արմեն Եսոյան
25.03.2024թ.